Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
նոյեմբերի 10-ի N 1641 -Ն որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

<<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ>> N ԱՊՁԲ -08/132 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան ----- ---------- 2011 թվական

Հիմք ընդունելով <<Պետական գնումների գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության և <<Գլենդել Հիլզ>> փակ բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված <<Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման>> N ԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում՝ 10808 համարի տակ), 2010 թվականի հունվարի 14-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող <<Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման>> N ԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> համաձայնագիրը (վավերացված Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում 96 համարի տակ) և 2010 թվականի մայիսի 12-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող <<Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման>> N ԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>

համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում՝ 3561 համարի տակ), կողմերը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ), որը գործում է կանոնադրության հիման վրա, ի դեմս _____ի (անձ. _____, տրված ____-ի կողմից _____թ., հասցեն՝ _____), ով գործում է _____ հիման վրա (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և <<Գլենդել Հիլզ>> փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Վահե Ալմոյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և հիմնարկի միջև 2011 թվականի հունվարի 31-ին կնքված համաձայնագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<7.1. Հիմնական պայմանագրի նոտարական վավերացմամբ կնքման ժամկետ է սահմանվում ոչ ուշ, քան 2012 թվականի մայիսի 1-ը: Սույն կետով սահմանված ժամկետը տարածվում է պայմանագրի կնքման պահից կողմերի միջև ձևավորված հարաբերությունների վրա և պայմանագրով գույքի տրամադրման համար սահմանված ժամկետները կիրառելիս՝ կողմերը հիմք են ընդունում սույն կետով սահմանված ժամկետը:

Հիմնական պայմանագրի կնքումից ծագող՝ գնորդի իրավունքների պետական գրանցումը կատարվում է գնորդի կողմից և գնորդի հաշվին:>>:

2. Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. Ինժեներական ենթակառուցվածքների անցկացման և բարեկարգման աշխատանքներ՝

1) ջրամատակարարման և ջրահեռացման կոյուղագծերի անցկացում՝ ներառյալ ներթաղամասային ցանցը.

2) էլեկտրամատակարարման ցանցի անցկացում.

3) բնակարանների ներտնտեսային գազաֆիկացում՝ ներառյալ ներթաղամասային ցանցը.

4) փողոցների ասֆալտապատում.

5) մայթերի ասֆալտապատում, մայթեզրերը՝ բետոնե բլոկներ.

6) տարածքի կանաչապատում և բարեկարգում,

7) փողոցների և մայթերի արտաքին լուսավորում:>>:

3. Սույն համաձայնագրի կնքմամբ պայմանագրով, ինչպես նաև պայմանագրի հավելվածներով գույքի տրամադրման համար սահմանված բոլոր ժամկետները՝ բացառությամբ պայմանագրի 7.1-ին կետի, ուժը կորցրած ճանաչել:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Վաճառող	Գնորդ
<<Գլենդել Հիլզ>> փակ բաժնետիրական ընկերություն	Հայաստանի Հանրապետության անունից՝
Քաղ.Երևան, Սայաթ-Նովայի 19, ՀՎՀՀ՝01549866	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության

<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ Մոսկվա մ/ճ

հաշվի համարը՝ 16062000136400
Տնօրեն՝ Վ.Ալմոյան

<<Քաղաքաշինական ծրագրերի>>
իրականացման
գրասենյակ> պետական հիմնարկ
Քաղ.Երևան,Կառավարական
տուն 3

ՀՎՀՀ 02596836
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական
վարչություն, հաշվի համարը՝
900011014496

Լիազ.անձ՝ _____

2011 թվականի _____ին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից: Համաձայնագիրն ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորություններն ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում _____ ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության
վճար՝ համաձայն <<Պետական տուրքի մասին>> և
<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքների:

Նոտար _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
նոյեմբերի 10-ի N 1641 -Ն որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

<<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ>> N ԱՊՁԲ -08/133 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան ------ ----------2011 թվական

Հիմք ընդունելով <<Պետական գնումների գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության և <<Գլենդել Հիլզ>> փակ բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված <<Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման>> N ԱՊՁԲ-08/133 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում 10807 համարի տակ)՝ 2010 թվականի մայիսի 12-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող <<Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման>> N ԱՊՁԲ-08/133 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում 3560 համարի տակ) կողմերը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ), որը գործում է կանոնադրության հիման վրա, ի դեմս

_____ի (անձ. _____, տրված՝ ____-ի կողմից _____թ., հասցեն՝ _____), ով գործում է _____ հիման վրա (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և <<Գլենդել Հիլզ>> փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Վահե Ալմոյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և հիմնարկի միջև 2011 թվականի հունվարի 31-ին կնքված համաձայնագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<7.1. Հիմնական պայմանագրի նոտարական վավերացմամբ կնքման ժամկետ է սահմանվում ոչ ուշ, քան 2012 թվականի մայիսի 1-ը: Սույն կետով սահմանված ժամկետը տարածվում է պայմանագրի կնքման պահից կողմերի միջև ձևավորված հարաբերությունների վրա և պայմանագրով գույքի տրամադրման համար սահմանված ժամկետները կիրառելիս՝ կողմերը հիմք են ընդունում սույն կետով սահմանված ժամկետը:

Հիմնական պայմանագրի կնքումից ծագող՝ գնորդի իրավունքների պետական գրանցումը կատարվում է գնորդի կողմից և գնորդի հաշվին:>>:

2. Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. Ինժեներական ենթակառուցվածքների անցկացման և բարեկարգման աշխատանքներ՝

1) ջրամատակարարման և ջրահեռացման կոյուղագծերի անցկացում՝ ներառյալ ներթաղամասային ցանցը.

2) էլեկտրամատակարարման ցանցի անցկացում.

3) բնակարանների ներտնտեսային գազաֆիկացում՝ ներառյալ ներթաղամասային ցանցը.

4) փողոցների ասֆալտապատում.

5) մայթերի ասֆալտապատում, մայթեզրերը՝ բետոնե բլոկներ.

6) տարածքի կանաչապատում և բարեկարգում.

7) փողոցների և մայթերի արտաքին լուսավորում:>>:

3. Սույն համաձայնագրի կնքմամբ պայմանագրով, ինչպես նաև պայմանագրի հավելվածներով գույքի տրամադրման համար սահմանված բոլոր ժամկետները՝ բացառությամբ պայմանագրի 7.1-ին կետի, ուժը կորցրած ճանաչել:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Վաճառող	Գնորդ
<<Գլենդել Հիլզ>> փակ բաժնետիրական ընկերություն	Հայաստանի Հանրապետության անունից՝
Քաղ.Երևան, Սայաթ-Նովայի 19	Հայաստանի Հանրապետության
ՀՎՀՀ՝01549866	քաղաքաշինության նախարարության
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ Մոսկվա մ/ճ	<<Քաղաքաշինական ծրագրերի>> իրականացման
հաշվի համարը՝ 16062000136400	գրասենյակ>> պետական հիմնարկ
Տնօրեն՝ Վ.Ալմոյան	Քաղ. Երևան,Կառավարական տուն 3
	ՀՎՀՀ 02596836
	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, հաշվի համարը՝ 900011014496
	Լիազ.անձ՝ _____

2011 թվականի _____ին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից: Համաձայնագիրն ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում _____ ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության
վճար՝ համաձայն <<Պետական տուրքի մասին>> և
<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքների:

Նոտար _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ